ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

ՀՀ, Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գ. Ակունք 5-րդ փողոց 28 շենք, 077 522515 , akunq_mankapartez@mail.ru

11.11.2019թ.

«Եվա և Սյուզի» ՍՊԸ (ՀՎՀՀ 01011426)
Հասցե՝ՀՀ, ք. Երևան Տիգրանյան 29
էլ/ հասցե՝ eva.syuzi@gmail.com

«Ակունք Համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ և « Եվա և Սյուզի» ՍՊԸ միջև 08.02.2019թ. կնքված N ԿՄԱՀՄ-ԳՀԱՊՁԲ-19/01-02 գնման պայմանագրի (այսուհետև՝Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը՝

2019թ. փետրվարի 3-ին մատակարարված 5 կգ հերկուլեսը եղել է ժամկետն անց (դառը), իսկ 10 կգ հատիկավոր լոբին չէր համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին (ցեցոտած), երկու անուն ապրանքն էլ ետ ենք վերադարձրել մատակարարին:

2019թ. փետրվարի 6-ին մատակարարված 1 կգ կակաոն չէր համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և հետ ենք վերադարձրել մատակարարին:

2019թ. մարտի 24-ին մատակարարված 10 կգ մակարոնի մեջ խոհարարը նկատել է առնետի կեղտ և այն պարկով հետ ենք վերադարձրել:

2019թ ապրիլի 8-ին մատակարարված 15 կգ հավի կրծքամիսը եղել է նեխած, հոտած, իսկ 15 տուփ կերակրի աղը եղել է Իրանի Հանրապետության արտադրանք, որոնք չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին և ետ ենք վերադարձրել:

2019թ հուլիսի 2-ին մատակարարված 22.5 կգ ոլոռը եղել է որդնած, ետ ենք վերադարձրել մատակարարին:

2019թ հուլիսի 18-ին մատակարարված 5կգ խնձորից 2.5կգ խնձորը եղել նեխած, որը թափվել է:

2019թ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին մատակարարված 40 կգ մակարոնը չէր համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետի պահանջները՝ «Ակունք համայնքի մանկապարտեզ»-ը 2019թ նոյեմբերի 8-ին միակողմանի մասնակի լուծել N ԿՄԱՀՄ-ԳՀԱՊՁԲ-19/01-02 գնման պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ « Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5(հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 16894 ՀՀ դրամ, որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 268810 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Աթանեսյան